

Արտոյն
Համար — 1772


1772

ՀԱՅ ԵՒ ԵԳԻՊՏԱՑԻՈՑ

ՄԻՈՒԹԻՒՆ

1772

ԿԱՆՈՆԱԳԻՐ



1936

ՏՊԱՐԱՆ ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ
ԳԱԶԻՐԷ

Համար 1772

493

ՀԱՅ ԵՒ ԵԳԻՊՏԱՑԻՈՑ

ՄԻՈՒԹԻԻՆ

Գրանց
Արտակ Ալպոյանեանի
Գանձեր - Մարտի

158
1772

ԿԱՆՈՆԱԳԻՐ



Տպարան ՍՍՀՄ - ՄԵՍԻՐՈՊ
Գանձեր

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

1900

UNIVERSITY OF CHICAGO



ՀԱՅ ԵՒ ԵԳԻՊՏԱՑԻՈՑ ՄԻՈՒԹԻՒՆ

ԿԱՆՈՆԱԳԻՐ

Ստորագրեալները որոշեցին հիմնել ՀԱՅ ԵՒ Ե-
ԳԻՊՏԱՑԻՈՑ ՄԻՈՒԹԻՒՆ, անուն Միութիւն մը:

Միութեան կեդրոնն է Գահիրէ: Պիտի ունենայ
Աղեքսանդրիա եւ այլ արուարձաններու մէջ Մաս-
նահիւղեր, որոնք ենթակայ են կեդրոնին:

Միութիւնը կը կազմեն ստորագրեալները, որոնք
հիմնադիրներն են, ինչպէս նաեւ այն անդամները
որոնք անոնց կը միանան:

*
* *
*

Ա.— Ն Պ Ա Տ Ա Կ

1. Հայերու եւ Եգիպտացիներու միջեւ գոյու-
թիւն ունեցող յարաբերութիւնները պահել, ամրա-
պրնդել եւ զարգացնել:

2. Զիրար աւելի լաւ նանչնալու եւ հասկնալու
համար, վերոյիշեալ երկու ազգերու միջեւ ստեղծել
եւ պահել եղբայրական միջնորդութիւն մը եւ տարածել
արարերէն լեզուն հայ Ազգին մէջ:

3. Նոյնպէս այդ երկու ազգերուն միջեւ գոյութիւն ունեցող զաղափարներու ա՛լ աւելի մերձեցման համար, քաջալերել ամէն գիտական, գրական, գեղարուեստական, վաճառականական եւ մարզական ձեռնարկ:

Միութեան վերոյիշեալ երեք նպատակներուն իրազորման միջոցներն են հետեւեալները.—

Ա. Հաստատել Միութեան անդամներուն համար արաբերէնի ձրի դասընթացք մը:

Բ. Բանախօսութիւններ կազմակերպել.

Գ. Հրատարակութիւններ ընել.

Դ. Հիմնել գրադարան մը.

Ե. Հաստատել անդամներու միջեւ փոխադարձ այցելութեան դրութիւն մը.

Զ. Գրական, Գիտական, Գեղարուեստական, Վաճառականական եւ Մարզական հաստատութիւններու հետ տեւական յարաբերութիւններու մէջ մտնել.

Է. Հայերէն եւ Արաբերէն լեզուներով թերթ մը հրատարակել.

Ը. Հիմնել դպրոցներ եւ ապաստանարաններ.

Թ. Հայերու եւ Արաբներու բարեսիրական օգնութիւններ ընել:

Ժ. Հիմնել Հայ եւ Եգիպտացի կանանց համար աշխատանոցներ, ուր հայ կիներ պիտի աւանդեն ձեռական ամէն տեսակ աշխատութիւններ.

ԺԱ. Հայ Ազգ. եւ անհատական վարժարաններ.

րէ՛ Արաբերէնի մէջ առաջին հանդիսացող շրջանաւարտ աշակերտ եւ տշակերտուհիներէն երկրորդական եւ յետոյ համալսարան յաճախել փափաքողներուն օժանդակել ըարոյապէս եւ նիւթապէս:

Սոյն խնդրոյն նպատակն է տարածել արաբերէն լեզուն հայերուն միջեւ, եւ այս առթիւ նախապատուութիւն կը տրուի Միութեան անդամներուն զաւակներուն:

Բ. Ա.Ն.Դ.Ա.Մ.Ա.Կ.Յ.Ո.Ի.Թ.Ի.Ի.Ն

Միութեան կրնան անդամագրուիլ ամէն չափահաս Հայ եւ Եգիպտացիներ:

Անդամագրուիլ փափաքողները պարտին առնուազն 10 Ե.Դ. վճարել իբր մուտքի տուրք:

Անդամակցութեան պայմաններն են. Ա. ինդրագիր մը ներկայացնել Գործ. Ժողովոյ, որ յետ խորհրդակցութեան կ'ընդունի կամ կը մերժէ զայն. Բ. Վճարել կանոնաւոր կերպով ամսական առնուազն 5 Ե.Դ. անդամավճար: Վեց ամիս անդամավճար չի վճարող անդամներ կը դադրին անդամակցութենէն:

Գ. Ժ.Ո.Ղ.Ո.Վ.Ն.Ե.Ր

Միութիւնը ունի երեք ժողովներ.

Ա. Վարչական Ժողով.

Բ. Գործադիր Ժողով.

Գ. Ընդհանուր Ժողով.

Դ. ՎԱՐՁԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Վարչական ժողովը կը բաղկանայ հետևեալներէն՝

- | | | |
|---------------------------------|--------------|-------------|
| Տ. Բրոթ. ՏԵԼԷՄԱՒ ԲԱՐԹՈՂԵԱՆ | Ատենապետ | |
| Մէթր ԱՀՄԷՏ ԷԼ ՍԱԻՏ ԱՊՈՒԷԼ ՍԷՈՒՏ | Փոխ-Ատեն- | |
| Տօրթ. ԿԱՐԱՊԵՏ ՍԹԵՅԱՆ | Գանձապետ | [պակտ |
| ՏՏ. ԼԵՒՈՆ ՀԷՔԻՄԵԱՆ | Ատենաղախ | |
| Ա.ԼՊԷՌ ՍԱՐԳԻՍԵԱՆ | Փոխ-Ատենաղախ | |
| Յ. Տ. ՄԿՐՏԻՉԵԱՆ | } | Խորհրդականք |
| ՅԱԿՈՒ ՅԱԿՈՒԵԱՆ | | |
| Տօրթ. ՊՕՂՈՍ ՇԱՄԼԵԱՆ | | |
| Տ. ԳՐԻԳՈՐ ԳԱԼՅԱ | | |

որոնք պիտի վարեն Միութեան բոլոր գործերը:

Ատենապետին բացակայութեան, փոխ - Ատենապետը կը վարէ ժողովը, միեւնոյն իրաւասութեամբ:

Գանձապետը, դրամական ամէն գործողութիւն պարտի ժողովին որոշման համաձայն կատարել, եւ հաշիւները ներկայացնել նոյնպէս ժողովին:

Առանց Ատենապետին եւ Գանձապետին կողմէ ստորագրուած ստացագրի ոեւէ գանձում չկատարուիր: Գանձապետը 20 Ե.Ո. միայն կրնայ պահել իր քով. մնացեալը պարտի առաջնակարգ դրամատուն մը դնել Միութեան հաշուոյն:

Վճարումները ստացազրի փոխարէն ըլլալով, պէտք է պիւտոճէին մէջ նախատեսուած ըլլան, չնախատեսուած վճարումները պէտք է Վարչ. Ժողովին հաւանութեան ենթարկուին:

Ատենադպիրին կամ իր օգնականին պաշտօնն է, Միութեան գործերով զբաղելու. Ժողովին հրաւիրագիրները ղրկելու. ինչպէս նաեւ Ընդհ. Ժողովը նիստի հրաւիրելու, եւ այս երկու ժողովներուն ատենագրութիւնները գրի առնելու հայերէն եւ արաբերէն լեզուներով:

Ժողովը կը գումարուի առ նուազն ամիսը մէկ անգամ: Բացառիկ նիստեր կրնան գումարուիլ Ատենապետին պահանջքով:

Ժողովը օրինաւոր կը նկատուի երբ հինգ հոգի ներկայ կ'ըլլան: Որոշումները կը տրուին ձայնի մեծամասնութեամբ:

Ժողովին պակասած անդամներուն տեղ, Միութեան հաւատարիմ եղող եւ օգտակար ծառայութիւններ ընող անդամ մը, անդամ կ'ընտրուի Ժողովին կողմէ:

Ժողովին անդամներէն միոյն, Միութեան Կանոնադրին տրամադրութեանց հակառակ շարժումը երբ նշմարուի, իր մասին վտարման որոշում տրուելու համար ստիպողաբար Ընդհ. Ժողով կը գումարուի, եւ յետ խորհրդակցութեան երբ հաստատուի այդ անդամին վլասակար արարքը, որոշում տրուելով կը վտարուի այդ անդամը:

Ժողովը կ'ընտրէ Գործ. Ժողովը:

Ընդհանուր մուտքին վրայ հարիւրին 10ը վար կը դրուի իբր պահեստի դրամ: Առանց Վարչական Ժողովոյ գրաւոր հրահանգին, պահեստի գումարը չկրնար գործածուիլ:

Ե. Գ Ո Ր Ծ Ա Դ Ի Ր Ժ Ո Ղ Ո Վ

Գործադիր Ժողովը կը բաղկանայ 7 հոգիէ, որոնք են. Ատենապետ, Փոխ - Ատենապետ, Գանձապետ, Ատենադպիր, Փոխ - Ատենադպիր, եւ երկու խորհրդականներ:

Ժողովին պաշտօնավարութեան շրջանն է երեք տարի: Ո եւ իցէ պատճառաւ պակասած անդամներուն տեղ, նորերը կ'ընտրուին Վարչական Ժողովոյ կողմէ:

Ժողովը կը գումարուի առ նուազն շաբաթը մէկ անգամ. եւ օրինաւոր կը նկատուի երբ անդամներէն հինգը ներկայ են. պայմանաւ որ իրենցմէ մէկը Ատենապետը կամ Փոխ-Ատենապետը ըլլայ: Որոշումները ձայնի մեծամասնութեամբ կը տրուին:

Ժողովին պարտականութիւններն են.

Ա.— Գործադրել Վարչական Ժողովոյ որոշումները:

Բ.— Կարգադրել Վարչական Ժողովոյ պատկանող ստիպողական գործերը, եւ արդիւնքը հաղորդել յիշեալ Ժողովին՝ առաջին առթիւ:

Գ.— Յարգել եւ գործադրել Միութեան Կանոնագրին բոլոր տրամադրութիւնները:

Դ. — Գանձել Միութեան բոլոր հասոյթները, փոխան ստացազրի, յտորագրուած Ատենապետին եւ Գանձապետին կողմէ: Գանձապետը պարտի հաւարուած դրամներէն միայն 10 Ե. Ո. պահել իր քովը եւ մնացեալը յանձնել Վարչական Ժողովոյ գանձապետին, փոխան ստացազրի:

Ե. — Կազմակերպել գանազան հանդէսներ եւ ջանալ նոր անդամներ արձանագրել, ինչպէս նաեւ ըստեղծել նոր հասոյթի աղբիւրներ:

Զ. — Իր ձեռնհասութենէն վեր եղող խնդիրները գրաւոր կերպով ներկայացնել Վարչ. Ժողովին:

Է. — Ամէն տարւոյ վերջը Վարչ. Ժողովին ներկայացնել իր տարեկան հաշուեկշիռը եւ տեղեկագիրը: Գործ. Ժողովոյ անդամներէն միոյն, Միութեան Կանոնադրին տրամադրութեանց հակառակ շարժումը երբ նշմարուի, Վարչական Ժողովը իրաւունք ունի գայն վտարել Միութենէն:

Զ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Ընդհ. Ժողովը կը բաղկանայ Միութեան բոլոր վճարող անդամներէն:

Ժողովը կը գումարուի ամէն տարւոյ Ապրիլ ամսուն: Բացառիկ նիստեր կրնան գումարուիլ Վարչական Ժողովոյ պահանջումով:

Ժողովին պարտականութիւններն են.

Ա. — Կարդալ Միութեան տարեկան հաշուեկշիռը եւ վաւերացնել:

Բ.— Նկատի առնել անդամներու կողմէ եկած ամէն առաջարկ:

Գ.— Միութեան Կանոնագիրը փոփոխութեան ենթարկել: Կանոնագրին նպատակին վերաբերեալ երեք յօդուածները անփոփոխելի են: Կանոնագրի փոփոխութիւնը տեղի կ'ունենայ Վարչական Ժողովոյ կողմէ տրուած պատճառաբանեալ պահանջմագիրով մը. այս պարագան պէտք է հրաւիրագիրներուն մէջ յիշուի:

Նիստերու հրաւիրագիրները անդամներուն պէտք է երկու շաբաթ առաջ ղրկուին: Նիստերը օրինաւոր կը նկատուին, երբ անդամներէն 50 հոգի ներկայ են: Հակառակ պարագային նիստը երկու շաբաթ կը յետաձգուի եւ գումարուելիք նիստը օրինաւոր կը նրկատուի, երբ Վարչական եւ Գործ. Ժողովոյ անդամները ներկայ են: Որոշումները կը տրուին ձայնի մեծամասնութեամբ:

Միմիայն կանոնագրի փոփոխութեան առթիւ տրուելիք որոշման պարագային, պէտք է Միութեան բոլոր անդամներուն կէսը ներկայ գտնուի:

Միութիւնը պարտի ունենալ ՀԱՅ ԵՒ ԵԳԻՊՏԱՅ-ԻՈՑ ՄԻՈՒԹԻՒՆ, բառերով Հայերէն եւ Արաբերէն գրուած պաշտօնական կնիք մը. որով պիտի կնքուին Միութեան պաշտօնական բոլոր գրութիւնները:

Է. Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն Հ Ա Ս Ո Յ Թ Ն Ե Ր Ը

Միութեան հասոյթի աղբիւրներն են.

Ա.— Մուտքի տուրքերը:

Բ.— Անդամավճարները.

Գ.— Նուիրատուութիւններ:

Դ.— Կտակներ, որոնց օրինաւորութիւնը կը հաստատուի Վարչ. Ժողովոյ կողմէ:

Ե.— Վիճակահանութիւններ:

Զ.— Հանգանակութիւններ:

Է.— Գործ. Ժողովի կողմէ ստեղծուած ուրիշ հասոյթի աղբիւրներ ինչպէս, թատերական ներկայացումներ, հանդէսներ, եւն.:

Ը. ԲԱՐԵՐԱՐ ԱՆԴԱՄՆԵՐ ԵՒ ՊԱՏՈՒՈՅ ԱՆԴԱՄՆԵՐ

Վարչական Ժողովը կուտայ, Ա. — Բարերար Անդամի տիտղոսը այն անձերուն, որոնք, մէկ անգամէն առ նուազն 100 Ե. Ո. նուիրատուութիւն կ'ընեն Միութեան: Սոյն գումարը երկու անգամէն վճարողներն ալ իրաւունք ունին ստանալու Բարերար Անդամի տիտղոսը: Բ. — Պատուոյ Անդամի տիտղոսը այն անձերուն, որոնք մէկ անգամէն առ նուազն 50 Ե. Ո. նուիրատուութիւն մը կ'ընեն:

Վարչական Ժողովը իրաւասու է, երբ հարկ տեսնէ, վարձատրել իր յամար դատած եղանակաւ Գործ. Ժողովոյ անդամները, ինչպէս նաեւ ուրիշ անդամներ:

Ժողովը իրաւասու է նաեւ Բարերար եւ Պատուոյ անդամներուն տալ ոսկի, արծաթ եւ պղինձ մետալներ:

Թ. ԼՈՒԾՈՒՄ

Միութիւնը (Տէրը մի արասցէ) լուծուած կը համարուի երբ իր անդամներուն թիւը 10ի իջած է. այս պարագային, Միութեան դրամը, եթէ կայ, կը յանձնուի տեղւոյս Հայ եւ Եգիպտական բարեսիրական Մարմիններու: Իսկ գոյքերը, տումարներ, կնիք, տետրակներ եւն. կը յանձնուին Եգիպտ. Ներքին Գործոց Նախարարութեան:

Լուծման պարագային, Մասնաճիւղերն ալ, եթէ կան, լուծուած կը համարուին: Անոնք պարտաւոր են, իրենց, այս առթիւ ղրկուած գրութեան թուականէն մինչեւ մէկ ամիս իրենց դրամները եւ բոլոր գոյքերը ղրկել Կեդրոնին:


Լուծման պարագան գրաւոր կերպով իսկոյն կը հաղորդուի Եգիպտ. Ներքին Գործոց Նախարարութեան. ինչպէս նաեւ թերթերու միջոցաւ կը ծանուցուի հանրութեան:

Ժ. ՎԱԻԵՐԱՑՈՒՄ

Սոյն կանոնագիրը կը ներկայացուի Եգիպտական Ներքին Գործոց Նախարարութեան ի վաւերացում:

ՀԻՄՆԱԳԻՐՆԵՐ

- Տ. ԲՐՕՑ. ՏԵԼԷՄԱՔ ԲԱՐԹՈՂԵԱՆ
- » ՄԷԹՐ ԱՀՄԷՏ Է՛Լ ՍԱՅԷՏ ԱՊՈՒ Է՛Լ ՍԷՈՒՏ
- » ԱՊՏԷԼ ՍԱԼԱՄ Է՛Ց. ՄՈՒՍԹԱՅԱ
- » ՏՕՔԹ. ԿԱՐԱՊԵՏ ՍԹԷՅԱՆ
- » ԼԵՒՈՆ ՀԷՔԻՄԵԱՆ
- » ՎԱՐԳ ԹԷՄՊԷՔ
- » ԱԼՊԷՌ ՍԱՐԳԻՍԵԱՆ
- » ՎԱՀՐԱՄ ԹԷՄՊԷՔԻՃԵԱՆ
- » ՏՕՔԹ. ՊՕՂՈՍ ՇԱՄԼԵԱՆ
- » ՅԱԿՈՐ ՅԱԿՈՐԵԱՆ
- » ԳՐԻԳՈՐ ԳԱԼՅԱ ԳԱԼՅԱԵԱՆ
- » ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԷՐ ՄԿՐՏԻՉԵԱՆ
- » ՏՕՔԹ. ԱՄԻՆ ՇԱՐՕՊԻՄ
- » ԺՕՐԺ Է՛Ց. Է՛Լ ԿԱՄԱԼ
- » ԻԶԶԷԹ Է՛Ց. ԹԷՎԼԻՔ



بعض مؤسسی الجمعية المصرية الارمنية

الجالسون — حضرة البروفسور ديلياك بارطوغيان الرئيس — على يمينه الاستاذ احمد السيد ابو السعود
وعلى شماله عبد السلام افندي مصطفي
الواقفون — من اليمين: الخواجات فرت تمبك — وهرام تمبيكيان — ونيس دير مجرديتشان —
ليون حكيمان — البير سر كيسان — الدكتور جرابيد اسطفان

ՀԱՅ ԵՒ ԵՎԻՊՏԱՅԻՈՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԳԻՐՆԵՐԻՆ

ՆՍԱԾ.— S. Frod. Տեղեմաբ Բարթողեան՝ Ասեմապե, իր աջին ունենալով՝ Մէքը Անմէ էլ Սալէ Ապու էլ Սէուս եւ ձախին՝ Ապէլ Սալամ էմ. Մուսարմա:

ՈՏՔԻ ՎՐԱՅ.— Չախէն աջ՝ S.S. Sofp. Կարապե Սքէժան, Ալպէր Սարգիսեան, Լեւոն Հէֆիսեան, Յովհաննէս Տէր Մկրտիչեան, Վահրամ Թէմպէլիսեան եւ Վարդ Թէմպէլ:



مضرة صاحب الجمهورية العظيم الملك فاروق الاول

ՆՈՐԻՆ ԱՆՃԱՓԱՌՈՒԹԻՒՆ
ՅԱՐՈՒՔ ԱՌԱՋԻՆ ԹԱԳԱՒՈՐ

الخواجه حاجوب اجويان
« ڪرڪور ڪنفا ڪلفيان

« ونيس دير مجردتشان

الدكتور أمين شارویم

جورج افندی الجمل

عزت افندی توفیق



على الفروع تسليم ما لديها من نقود ومنقولات واوراق
واختام وخلافه للمركز الرئيسي في بحر شهر من تاريخ اعلانها
في هذه الحالة ايضاً تعلن وزارة الداخلية المصرية بحل الجمعيه
والنشر عنها في الصحف

التصديق

مقدم هذا القانون لوزارة الداخلية المصرية للتصديق عليه

المؤسسون

- البروفسور ديلياك بارطوغيان
الاستاذ احمد السيد ابو السعود
عبد السلام افندي مصطفى
الدكتور جرايد اسطفان
الخواجه ليون حكيميان
« فرت تمبك
« البير سركيسيان
« وهرام تمبكيچيان
الدكتور بوغوص شمليان

١٥٨
١٥٨



الاعضاء المحسنون واعضاء الشرف

يمنح مجلس الادارة

اولاً رتبة عضو محسن لكل من وهب الجمعية مبلغاً قدره
مائة جنيه

ثانياً ورتبة عضو شرف لكل من يتبرع للجمعية بمبلغ خمسين
جنيهاً

لمجلس الاداره الحق في مكافأة اعضاء اللجنة التنفيذية
طبق ما جاء في باب اللجنة التنفيذية وله الحق ايضاً في
اعطاء مداليات من الذهب او الفضة او النحاس للأعضاء
المحسنين واعضاء الشرف واعضاء الجمعية .

حل الجمعية

اذا بلغ عدد اعضاء الجمعية عشرة تعتبر « لا قدر الله » محلوله
في هذه الحالة تقدم اموالها وقيمة منقولاتها للجمعيات الخيرية
مصرية وارمنية - اما الدفاتر والاوراق والاختام فتسلم لوزارة
الداخلية المصرية

في حالة حل الجمعية تعتبر فروعها ملغاة ايضاً

عضواً من أعضائها • فإذا لم يحضر هذا العدد تأجل انعقادها
اسبوعين ويكون الانعقاد الجديد صحيحاً إذا حضره أعضاء
مجلس الإدارة واللجنة التنفيذية •

تصدر قرارات الجمعية العمومية بالأغلبية المطلقة لاصوات
الحاضرين فيها وذلك فيما عدا القرارات الخاصة بتعديل القانون
فلا يصح تعديله إلا إذا حضر الاجتماع نصف الأعضاء •
يجب أن يكون للجمعية ختم رسمي باللغتين العربية والأرمنية
كي تختم به كل الأوراق الرسمية

إيرادات الجمعية

مصادر إيرادات الجمعية هي :

- (١) رسوم الدخول
- (٢) الاشتراكات
- (٣) الهدايا
- (٤) الهبات التي يجب تقديمها رأساً لمجلس الإدارة
- (٥) اليا نصيب
- (٦) التبرعات
- (٧) ما تقوم بعمله اللجنة التنفيذية من حفلات عمومية وخلافه

(٦) تقديم تقريرها وميزانيتها لمجلس الادارة في آخر كل سنة
كل عضو يأني بأمر يتعارض مع مبادئ الجمعية واغراضها
او اهمل تنفيذ الستة بنود السابقة لمجلس الادارة حق فصله

الجمعية العمومية

تتألف الجمعية العمومية من جميع الاعضاء الذين سددوا
اشتراقات الجمعية .

تجتمع الجمعية العمومية اجتماعا عاديا في شهر ابريل من كل
سنة ويصح انعقادها بصفة غير عاديه بناء على طلب مجلس الادارة

تقوم الجمعية العمومية :

- (١) بقراءة الميزانية السنوية والتصديق عليها .
- (٢) النظر فيما يعرض من آراء الاعضاء واقتراحاتهم .
- (٣) تعديل قانون الجمعية ما عدا ما يختص بالاغراض المنوه عنها
بالبنود ١ ، ٢ ، ٣ ، فلا تغير - يجوز هذا التعديل بناء على
طلب مجلس الادارة وفي هذه الحالة يجب ذكر الاسباب في
طلب التعديل وبيانها لاعضاء الجمعية العمومية في ورقة الدعوة
ترسل دعاوى الاجتماعات قبل الميعاد المحدد باسبوعين على
الاقل ويكون انعقاد الجمعية العمومية صحيحاً اذا حضره خمسون

وسكرتير ومساعد سكرتير وعضوين - اى سبعة اعضاء .
مدة عضوية اعضاء اللجنة التنفيذية هي ثلاثة سنوات واذا
خلا محل احد الاعضاء اختار مجلس الادارة عضوا بدله .
تتعقد اللجنة التنفيذية مرة في كل اسبوع على الاقل ويصح
انعقادها اذا حضرها خمسة من الاعضاء بشرط ان يكون منهم
رئيس اللجنة او وكيله وتكون قرارات اللجنة التنفيذية باغلبية
الآراء المطلقة

على اللجنة التنفيذية

- (١) تنفيذ قرارات مجلس الادارة
- (٢) ادارة اعمال المجلس المستعجلة والقيام بها ويجب اخطار
مجلس الادارة بما يتم من هذه الاعمال في اول انعقاد لها
- (٣) تنفيذ قانون الجمعية بعناية .
- (٤) تحصيل جميع ايرادات الجمعية بموجب ايصالات موقع عليها
من الرئيس وامين الصندوق ولا يباح لامين الصندوق بان
يحتفظ باكثر من عشرة جنيهات مصريه حيث يجب ان يسلم
الباقى لامين صندوق مجلس الاداره بموجب ايصال .
- (٥) ان تقوم ببناء على ما يعتمده مجلس الادارة بترتيب عمل
حفلات عمومية والاجتهاد في جلب اعضاء جدد للجمعية
والحصول على موارد تزيد ايراداتها .

سكربتيراً مساعداً	الخواجه البير سر كيسان
مستشاراً	« ونيس دير مجردتشان
«	« هاجوب اجويان
«	الدكتور بوغوص شمليان
«	المسيو كركور كلفايان
	لادارة جميع الاعمال المتعلقة بالجمعية

يحل الوكيل محل الرئيس عند غيابه في كافة اختصاصاته .
يدير امين الصندوق مالية الجمعية طبقاً لقرار مجلس الاداره
وملزم بتقديم الحسابات للمجلس
لا يمكن استلام أى مبلغ الا بموجب ايصال ممضى من
الرئيس وأمين الصندوق .

لا يسمح لامين الصندوق بان يحتفظ باكثر من عشرين جنياً
مصرياً حيث هو ملزم بوضع باقى الايراد باسم الجمعية فى احدى
المصارف المشهورة التى يقررها مجلس الادارة .

لا يصرف شىء الا بموجب ايصال وحتما ان يكون المصروف
مقررأ فى الميزانية - فاذا احتاج الامر لصرف مبالغ غير مقرره
فى الميزانية او فى غير الابواب المقرره لها وجبت موافقة مجلس
الادارة قبل الصرف .

يقوم السكرتير ومساعده بادارة الشؤون الخاصة بالجمعية

وبدعوة مجلس الادارة والجمعية العمومية وتدوين محاضر جلساتها
باللغتي العربية والارمنية.

ينعقد مجلس الادارة مرة في كل شهر على الاقل ويجوز ان
ينعقد انعقادا غير عادي بناء على طلب الرئيس

يصح انعقاد مجلس الادارة متى حضره خمسة من الاعضاء
وتكون قراراته باغلبية آراء الحاضرين المطلقة

اذا خلا محل احد اعضاء مجلس الاداره اختار المجلس عضوا
بدله ممن يكون قد ادى للجمعية من الخدمات الصادقه ما يرفع شأنها
كل عضو يأتي بامر يتعارض مع مبادئ الجمعية واغراضها
تستدعي الجمعية العمومية بصفة مستعجلة لتقرير فصله اذا ثبتت
ادانته

يعين مجلس الاداره اعضاء اللجنة التنفيذية
يحفظ ١٠ في المئة من الايراد العمومي كاحتياطي ولا يمكن
استعمال هذا المبلغ الا بامر من مجلس الادارة

اللجنة التنفيذية

تتألف اللجنة التنفيذية من رئيس ووكيل وأمين صندوق

قدره خمسة قروش صاغ على الاقل
الاعضاء الذين لا يسددون اشتراكاتهم مدة ستة اشهر تشطب
اسماؤهم .

هيئات الجمعية

للجمعية ثلاث هيئات :

- (١) هيئة مجلس الاداره
- (٢) اللجنة التنفيذية
- (٣) الجمعية العموميه

مجلس الادارة

يتألف مجلس الادارة من :

- | | |
|----------------|---------------------------------|
| رئيساً | جناب البروفسور ديليمك بارطوغيان |
| وكيلاً | الاستاذ احمد السيد ابو السعود |
| اميناً للصندوق | الدكتور جرابيد اسطفان |
| سكرتيراً | الخواجه ليون حكيمان |

والوسائل التي تستعين بها الجمعية في تحقيق اغراضها المشار اليها في البنود ١، ٢، ٣، هي : ١ - انشاء قسم مجانى لتدريس اللغة العربية لأعضاء الجمعية ٢ - المحاضرات ٣ - النشرات ٤ - انشاء مكتبة ٥ - الحث على تبادل الزيارات ٦ - ايجاد الاتصال المستمر مع الدوائر الادبية والعلمية والفنية والتجارية والرياضية ٧ - اصدار جريدة باللغتين العربية والارمنية ٨ - انشاء المدارس والملاجىء ودور المعاونات الخيرية للمصريين والأرمن ٩ - انشاء مشاغل للسيدات المصريات والأرمنيات ١٠ - مساعدة طلبة وطالبات المدارس الارمنية المتفوقون في اللغة العربية والحائزون للشهادات التي تؤهلهم لدخولهم في المدارس الثانوية بالحقاقهم بها وبالجامعة المصرية تشجيعاً لنشر اللغة العربية بين الأرمن وتعطى الأولوية لانباء اعضاء الجمعية.

الاشتراك

يشترط فيمن يريد الانضمام لهذه الجمعية ان يكون :
١- مصرياً او أرمنياً بالغاً سن الرشد ٢- ان يقدم طلباً بالكتابة تقبله لجنة الجمعية التنفيذية ٣- ان يدفع مبلغ عشرة قروش صاغ على الاقل رسم دخول ٤- وان يقوم بدفع اشتراك شهري

قانون

الجمعية المصرية الارمنية

قرر الموقعون على هذا تأليف جمعية باسم الجمعية المصرية الارمنية مركزها مدينة القاهرة ولها فروع بالاسكندرية والمدريات .

تتألف الجمعية من الموقعين على هذا باعتبارهم مؤسسين لها ومن ينضم اليهم من الاعضاء .

مغراض الجمعية



- (١) توثيق وتنمية العلاقات بين المصريين والارمن .
- (٢) ايجاد اقبال روجي وفكري وثيق بين الشعبين وتهيئة الجو الصالح لتعارفهما تعارفاً وطيداً ونشر اللغة العربية بين الارمن .
- (٣) تشجيع وتعزير كل عمل علمي او ادبي او فني او تجاري او رياضي يمكن ان يزيد في التقريب الفكري بين الشعبين .

Հիւան
Արտի Արտիստներ
Գանձիկ — Մարտիտ

قانون

الجمعية المصرية الارمنية

١٩٣٦



ԳԱՆ Հիմնադրար Գիտ. Գրադ.



FL0533641